Էջմիածին գիւղին հիւսիս-արեւմտեան կողմը, կարկաջահոս և ծիծաղագնաց քարցաղ գետին մօտերը, գետնափոր ջուր կը հանէ, որ ստորերկրեայ ճամբով, հիւսիսային կողմէ կը հասնի մինչև վեհարանին պարտէզը, ուր առու կազմելով կ'ընթանայ դէպի վանքին պարիսպը և շեղելով հարաւային կողմը, կը խառնուի Փիլիպպոս կաթողիկոսին գետնափոր ջուրին և միասին կ'ոռոգէ ներքին դաշտը, որ կը գտնուի Գայիանէի վանքին ներքև, մինչև Շորաքեաթ, Ղոռուղ և մեծ ծովակը։ Ջամբռի հեղինակը կ'ըսէ. «Այս ջրովս գրեթէ կեան և կենցաղավարին աթոռայինքս և գիւղականքն ըստ մեծի մասին։ Քանզի յայսմանէ և ճիւղ մի բաժանեալ մտանէ ի մերձ պարիսպն միաբանից, որով ոռոգին բոյսք և ծառք պարսպին և լուանին և զովանին միաբանքն հանապազ։ Ի վերայ այսր ջրոյս շինեաց այս երանելիս ի հարաւակոյս մերձ Սուրբ Աթոռոյն զջրաղացն՝ որ Քանքանի ջրաղաց ասի, որ և գոյ չէն մինչև ցայսօր (1763-1780), և բանի ի յամառն և ի ձմեռն» (36)։

Յակոբ Ջուղայեցի գետնափոր ջուր կամ «քանքան» կը հանէ նաև կաթողիկոսանիստ վանքին հարաւային կողմը։ Ասոր ակը եւս Քարցաղ գետէն է, Ալիբեկլու գիւղին հանդիպակաց. ան զառիվայր կ'ըն-

(36) Ջամբռ. 197—198. Ջաքարիա 143։